Տեղեկագիր թիվ 2 (փետրվար 2021թ.)

Հայ դատի Կենտրոնական խորհրդի հայտարարությունը

2021 թվականի փետրվարի 10-ին, Ազգային Ժողով-կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ, ՀՀ արտաքին գործերի նախարարը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների վերաբերյալ արել էր խնդրահարույց հայտարարություններ, որոնք Հայ դատի Կենտրոնական խորհրդի մոտ լուրջ մտահոգությունների տեղիք էին տվել: Այդ առիթով Կենտրոնական Խորհուրդը փետրվարի 11-ին հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ:

տես ավելին

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների հիմնական աշխատանքների ամփոփագրեր

փետրվարի 1-15

փետրվարի15-28

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբ

ԱՄՆ Կոնգրեսի առավել քան հարյուր անդամներ Բայդենի վարչակազմին կոչ են անում սատարել Հայաստանին և Արցախին

ԱՄՆ Կոնգրեսի առավել քան հարյուր

անդամներ, ամերիկյան ավելի քան քսան նահանգներից, երկկուսակցական նամակով Բայդենի վարչակազմին կոչ են արել կոնկրետ քայլերով սատարել Արցախի գոյատևմանն ու Հայաստանի անվտանգությանը:
Երկկուսակցական նամակին մեծ թվով կոնգրեսականների միացման համար Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը մեծ աշխատանք է իրականացրել՝ համախմբելով համայնքային ռեսուրսը:
տես ավելին

117-րդ Կոնգրեսում բավական կարճ ժամանակում ձևավորվեց նաև Կոնգրեսի հայկական խումբը

113 կոնգրեսականներ ընդգրկող խմբի համանախագահներն են մեր ժողովրդի մեծ բարեկամներ Ֆրենք Փալոնը, Գուս Բիլիրակիսը, Ջեքի Սփայերը և Դեյվիդ Վալադաոն, խմբի փոխնախագահը Ադամ Շիֆն է: Կոնգրեսի հայկական խմբի շուրջ մեկ տասնյակ անդամներ, վերջին երկու շաբաթվա ընթացքում պարբերաբար բարձրաձայնել են հայ համայնքին հուզող խնդիրները, որոնք գլխավորապես վերաբերում են ադրբջանաթուրքական ագրեսիայի հետևանքով ստեղծված իրավիճակին:
տես ավելին



Congress of the United States
Washington, DC 20515

February 26, 2021

The Honorable Antony Blinken
Office of the Secretary
U.S. Department of State
2201 C Street NW
Washington, DC 20520

Dear Secretary Blinken,

As the Biden administration formulates its foreign policy in regard to Turkey, we ask that you aim to address the troubling human rights abuses taking place under President Recep Tayyip Erdogan. Turkey has long been a key United States ally. Unfortunately, President Erdogan has strained the relationship between our nations. Strategic issues have rightfully received significant attention in our bilateral relationship, but the gross violation of human rights and democratic backsliding taking place in Turkey are also of significant concern.

President Erdogan and his Justice and Development Party have used their nearly two decades in power to weaken Turkey's judiciary, install political allies in key military and intelligence positions, crack down on free speech and free press, and wrongfully imprison political opponents, journalists and minorities. Since 2016, more than 80,000 Turkish citizens have been imprisoned or arrested and more than 1,500 nongovernmental organizations have been closed to suppress political opposition. Among those arrested on dubious criminal charges include three Turkish staff employed by the U.S. State Department. We urge you to prioritize their cases, including their immediate release and dismissal of all charges, in your engagements with Turkey.

President Erdogan's government even brought its style to the streets of our nation's capital, when during Erdogan's 2017 visit to the United States, Turkish security personnel assaulted peaceful protestors and federal employees. Four of Erdogan's guards still face charges in the United States for the incident. They remain at large in Turkey.

While it is in our mutual interest for the United States and Turkey to remain strategic allies and repair the rifts between us, we believe changes to President Erdogan and his party's behavior are vital to seeing that relationship restored. We hope that State Department under your leadership and the Biden administration more broadly will elevate human rights and democratic backsliding concerns in our bilateral relations. To that end, we pledge to work with you so that we can not only advance our nation's national security interests, but also uphold our commitments to supporting human rights, the rule of law, and democratic values.

Sincerely,

Seth Moulton
Member of Congress

Anthony Gonzalez
Member of Congress

180 կոնգրեսական դիմել է ԱՄՆ պետքարտուղարին՝ Թուրքիային սանձելու հորդորով

«Նախագահ Էրդողանն ու իր «Արդարություն և զարգացում» կուսակցությունն իրենց իշխանության գրեթե 20 տարիներն օգտագործեցին թուլացնելու իրավական համակարգը, ճնշելու ազատ խոսքն ու ազատ մամուլը՝ անարդարացիորեն դատելով քաղաքական ընդդիմախոսներին և փոքրամասնություններին: 2016 թվականից ավելի քան 80 հազար քաղաքացիներ են դատվել, փակվել են 1500 հասարակական կառույցներ»

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբ

Ավստրալիայի Հարավային Ավստրալիա նահանգը ճանաչել է Արցախի Հանրապետության անկախությունը և դատապարտել Ադրբեջանին ու Թուրքիային

Հարավային Ավստրալիան Արցախի ինքնորոշման իրավունքը ճանաչած, Ադրբեջանին և Թուրքիային, բնիկ հայերի հայրենիք ներխուժելու համար, դատապարտած երկրորդ ավստրալիական նահանգն է: Ճանաչման բանաձևն ընդունվել է նահանգային խորհրդարանում:
տես ավելին

Ավստրալիայի խորհրդարանին ներկայացվել է Արցախը ճանաչելու խնդրագիր

Ավստրալիայի խորհրդարանի կայքում խնդրագիր է ներկայացվել, որով կոչ է արվում ճանաչել Արցախի Հանրապետությունը: Այն ներկայացվել է խորհրդարանի Ներկայացուցիչների պալատին և փոխանցվել է Ավստրալիայի արտաքին գործերի նախարարությանը:
Ավստրալիայի Հայ դատի հանձնախմբի նախաձեռնած խնդրագիրը ստորագրել է 3164 ավստրալացի:
տես ավելին

Օժանդակություն Հայաստանին

Հայ դատի Ավստրալիայի հանձնախումբը պաշտոնապես դիմել է երկրի ֆեդերալ կառավարությանը՝ Հայաստանին օժանդակության տրամադրման համար: Իբրև հիմնավորում նշվել է Արցախի նկատմամբ ագրեսիայի կիրառման հետևանքով առաջացած հումանիտար ճգնաժամը, որն ավելի է սրվում կորոնավիրուսային համավարակի առկայության պայմաններում:

Ավստրալիայի Հարավային Ավստրալիա նահանգի Ներկայացուցիչների պալատի կողմից Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչելուց և ադրբեջանաթուրքական ագրեսիան խստիվ դատապարտելուց հետո, արդեն փետրվարի 17-ին Ներկայացուցիչների պալատի բանաձևին է միացել նույն նահանգի Օրենսդիր ժողովը:
տես ավելին

Ավստրալիան սատարում է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին և Արցախի ժողովրդի ինքնորոշման իրացմանը

Ավստրալիայի արտաքին գործերի նախարար Մարիս Փեյնը վերահաստատել է ավստրալիական կառավարության աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացին՝ ընդգծելով ժողովուրդների իրավահավասարությունն ու ինքնորոշման իրավունքը, որպես 2020 թ. արյունալի պատերազմից հետո Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծումն ուղղորդող երեք սկզբունքերից մեկը։
տես ավելին

Հայ դատի Եվրոպայի հանձնախումբ

Բրյուսելի կենտրոնական գրասենյակ

2021թ. փետրվարի 10-ին Եվրոպական միությունը ծանուցել է Հայաստանի Հանրապետությանը՝ ԵՄ և ԵՄ անդամ երկրների կողմից ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացման գործընթացի ավարտի մասին։ Համաձայնագիրը

Իբրև Եվրոպական Միության անդամ 13 երկրներում գործող և ԵՄ քաղաքացի հանդիսացող հայերից բաղկացած Հայ դատի հանձնախմբերի աշխատանքը համադրող կազմակերպություն՝ Հայ դատի Եվրոպայի գրասենյակը ԵՄ ղեկավար ինստիտուտների ուշադրությունն է հրավիրել ՀՀ-ԵՄ համաձայնագրի՝ Ղարաբաղյան հիմնախնդրին վերաբերող ձևակերպումների վրա, մասնավորապես ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքի իրացման։
Հայ դատի Եվրոպայի գրասենյակը, ուշադրություն հրավիրելով նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափում բանակցությունների վերսկսման վրա՝ Եվրոպական Միությունից, ի դեմս Ֆրանսիայի, ակնկալել է միջնորդական

լիարժեքորեն ուժի մեջ կմտնի ս.թ. մարտի 1-ից:

ներգրավածության մեծացում և ստանձնած հանձնառությունների կատարում:

Եվրոպական Խորհրդարանի կիպրացի պատգամավոր Կոստաս Մավրիդիսը նախաձեռնել է խնդրագրի ստորագրում՝ ուղղված Եվրոպական Միության արտաքին քաղաքականության և անվտանգության բարձր ներկայացուցիչ Ջոզեֆ Բորելին՝ կոչ անելով վերջինիս Եվրոպական Միության տարածքում անհապաղ արգելել թուրքական ծայրահեղ-ազգայնական «գորշ գայլեր» խմբավորման գործունեությունը: Մավրիդեսը վկայակոչել է այն հիմքերը, որոնց առկայության պարագայում ֆրանսիական կառավարությունն արգելեց այդ խմբի գործունեությունը երկրի տարածքում:

Հայ Դատի Եվրոպայի կենտրոնական գրասենյակը սոցիալական ցանցերի միջոցով իրականացրել է իրազեկման արշավներ՝ նպատակ ունենալով եվրոպական շրջանակների ուշադրությունը հրավիրել Ադրբեջանում պահվող հայ գերիների խնդրի վրա, իսկ Սումգայիթյան ջարդերի հերթական տարելիցի օրը գրասենյակը ակտիվորեն շրջանառել է 1988 թ. Եվրոպական Խորհրդրանի կողմից ընդունված մի պատմական բանաձև, որում եվրոպացի օրենսդիրները ընդգծում են Լեռնային Ղարաբաղի հայապատկան բնույթը, Սումգայիթյան դեպքերը որակում որպես կոտորած և աջակցում Արցախի՝ Հայկական ՍՍՀ-ին վերամիավորվելու պահանջը:

Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբ

Փետրվարի 12-ին Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախումբը, երկրի արտաքին քարտուղար (արտգործնախարար) Դոմինիկ Ռաաբին հասցեագրված նամակով, խիստ քննադատության է ենթարկել Բաքվում Միացյալ



Փետրվարի 8-ին Մեծ Բրիտանիայի Հայ դատի

թագավորության դեսպան Ջեյմս Շարպին՝ Արցախի վերաբերյալ Թվիթերում կատարված անտեղի գրառման առիթով, որում նա տեղադրել էր լուսանկար և վերնագրել «ազատագրված տարածքներ»։ Հանձնախումբը նշել է, որ դեսպանի գրառումը հակասում է Միացյալ թագավորության արտաքին քաղաքականությանը, պաշտպանում է Ադրբեջանին Արցախի ժողովրդի նկատմամբ ագրեսիայի գործում, ինչպես նաև անզգայուն վերաբերմունք է Բրիտանիայի հայ համայնքի նկատմամբ։

հանձնախումբը, Մեծ Բրիտանիայի կիպրացիների դաշինքը, Բրիտանիայի քրդական ժողովուրդների ժողովդրավարական ասամբլեան և «Խաղաղություն Քրդստանում արշավը» համատեղ հայտարարությամբ բրիտանական կառավարությանը կոչ են արել ցեղասպան վարչակազմերի հետ առևտրային արտոնյալ հարաբերությունների մեջ չմտնել այդպիսով հստակ ուղերձ հղելով ամբողջ աշխարհին, որ Բրիտանիան երբեք մեղսակից չի եղել ցեղասպանությանը, մարդու իրավունքների ոտնահարմանը և մարդկության նկատմամբ հանցագործություններին։



Հայ դատի Մեծ Բրիտանիայի հանձնախմբի պատասխանատուն հեռակապով քննարկում է ունեցել Հայաստանում Մեծ Բրիտանիայի նորանշանակ դեսպանի հետ և բարձրացրել հայությանը հուզող հարցերի լայն շրջանակ։

Հայ դատի Ավստրիայի, Բելգիայի և Նիդերլանդների հանձնախմբեր

Հայ Դատի Նիդերլանդների հանձնախմբի՝ տարիներով կատարած անխոնջ աշխատանքի արդյունքում, Նիդերլանդների խորհրդարանն ընդունեց «Հայոց ցեղասպանության մասին» հերթական որոշումը, որը Նիդերլանդների կառավարությանը կոչ է անում պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը։ Չնայած Նիդերլանդների խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության բազմակի ճանաչմանը՝ Նիդերլանդների կառավարությունը դեռևս այդ քայլը չի կատարել։ Այս որոշումը հստակորեն դիմում է կառավարությանը՝ պաշտոնական ճանաչման պահանջով։



Հայ դատի Ավստրիայի հանձնախումբը, նախորդ տարվա հաջող փորձից հետո, նախաձեռնել է **haytadology 2** (հայդատոլոգիա) խորագիրը կրող սեմինարների երկրորդ շարքը, որի ընթացքում մասնակիցները, առաջին ձեռքից, հիմնավոր տեղեկություններ են ստանում Հայ դատի էության, գործունեության ոլորտների, աշխատելաոճի, ներհայաստանյան, արցախյան և միջազգային քաղաքական զարգացումների և հայ կյանքին վերաբերող այլ ոլորտների վերաբերյալ։ Հայդատոլոգիա 2-ը սսկվեց փետրվարի 21-ին և ավարտվեց փետրվարի 27-ին։ Սեմինարներին մացնակցեցին 18-35 տարեկան, եվրոպահայ առավել քան 80

Նիդերլանդների Հայ Դատի հանձնախմբի՝ տարիներով կատարած անխոնջ աշխատանքի արդյունքում, Նիդերլանդների խորհրդարանն ընդունեց «Հայոց ցեղասպանության մասին» հերթական որոշումը, որը Նիդերլանդների կառավարությանը կոչ է անում պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը։ Չնայած Նիդերլանդների խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության բազմակի ճանաչմանը՝ Նիդերլանդների կառավարությունը դեռևս այդ քայլը չի կատարել։ Այս որոշումը հստակորեն դիմում է կառավարությանը՝ պաշտոնական ճանաչման պահանջով։

երիտասարդներ

Հայ դատի Կանադայի հանձնախումբ

2006 թ.-ից Օտտավայում գործում է Հայ դատի հանձնախմբի գրասենյակը, նոր գրասենյակը նույնպես Կանադայի մայրաքաղաքում է, քաղաքի կենտրանական հատվածում:

Հայ դատի Կանադայի հանձնախումբը նոր գրասենյակ ունի

ՀՅԴ Կանադայի Կենտրոնական Կոմիտեի, որոշմամբ Հայ դատի Կանադայի հանձնախմբի կարիքները բավարարելու, օրեցօր ընդլայնվող գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար՝ հանձնախմբի համար ձեռք է բերվել եռահարկ գրասենյակ: Հայ դատի Կանադայի հանձնախումբը գործում է սկսած 1965թ. և խոշոր դերակատարում է ունեցել կանադահայ համայնքի կազմակերպման, քաղաքականացման և ընդհանրապես հայապահպանության գործում: